

ԳՈՒՅՆԵՐՆ ԱՇԽԱՐՀԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԻ ԿՈՆՑԵՊՏՈՒԱԼ ՀԱՍՏԱԿԱՐԳՈՒՄ

Ամայա Հարությունյան
Երևանի պետական համալսարան

Սույն հոդվածում անդրադարձ է կատարվում կոնցեպտ և հասկացություն եզրերի գործածությանը: Գիտարկվում է կոնցեպտ – բառ փոխհարաբերության խնդիրը: Առաջ է քաշվում այն տեսակետը, որ կոնցեպտը լեզվից հարաբերականորեն անկախ միավոր է, որ այն մտածողության յուրահատուկ գործառնություններից մեկի արդյունք է և պատկանում է գուտ տրամաբանության ոլորտին: Գույներն (գունանունները) ուրույն տեղ են զբաղեցնում աշխարհի լեզվական պատկերում և ակտիվորեն մասնակցում են դրա ձևավորմանը:

Գունանունները և գունանվանական կառույցները կարող են ծառայել որպես այս կամ այն կոնցեպտի նկարագրման միջոց՝ տեղեկություններ հաղորդելով լեզվամշակութային և պատմամշակութային արժեքների, ինչպես նաև լեզվամտածողության և աշխարհընկալման առանձնահատկությունների մասին տվյալ հանրությամբ:

Քանալի բառեր. լեզվական պատկեր, լեզվամշակութային հանրույթ, կոնցեպտ, եզրույթ, հավելիմաստ:

Ներածություն

Արտալեզվական աշխարհը բազմագույն է՝ իր անսահմանափակ գուներանգներով, որոնց միայն որոշակի քանակն է անվանվում լեզվում:

Գույներն ազդում են մարդու հոգեկան աշխարհի վրա՝ առաջացնելով բազմաբովանդակ հույզեր ու զուգորդումներ, որոնք էլ, իրենց հերթին, ընդլայնում են գունիմաստի կառուցվածքի սահմանները՝ առաջ բերելով վերացական հասկացություններ:

Գունանունների հավելիմաստները (այդ թվում նաև խորհրդանշական) ունեն ազգային պատկանելություն, քանի որ ամեն մի լեզվամշակույթ յուրակերպ է հատվածավորում, անվանում և արժեվորում արտալեզվական աշխարհը: Ուրեմն կարելի է պնդել, որ գունանունների ուսումնասիրությունը, ինչ-որ առումով, տվյալ ազգի պատմության, մշակույթի, մտածողության և հոգեբանության ուսումնասիրության մաս կարող է կազմել և հակառակը: Սրանով է նշագծվում գունանունների՝ որպես հետազոտական լեզվանյութի եզակիությունն ու կարևորությունը: Աշխարհի պատկերը (ոչ միայն լեզվականը) իմացություն է աշխարհի և մարդկանց մասին, որն արձանագրվում և բնու-

թագրվում է ինչպես անհատական, այնպես էլ հասարակական գիտակցությամբ: Կոնցեպտ հասկացության էութենական հատկանիշների առանձնացումը կարևոր նշանակություն կարող է ունենալ աշխարհի լեզվական պատկերում գունանունների իմաստային գործառույթների նկարագրության համար: Անառարկելի է, որ գույները (գունանունները) ուրույն տեղ են զբաղեցնում աշխարհի լեզվական պատկերում և ակտիվորեն մասնակցում են դրա ձևավորմանը:

Կոնցեպտ ասված երևույթի խորքային ըմբռնումը նախ և առաջ կախված է կոնցեպտ, հասկացություն և նշանակություն եզրերի բովանդակային պլանների հստակեցման և տարանջատման խնդրից: Համապատասխան գրականության ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգելու, որ նշված երեք հասկացությունների տարբերակումը, դրանց իմաստային սահմանների և գործառույթների տարրորոշումը ժամանակակից ճանաչողական լեզվաբանության ամենաքննարկելի և ամենավիճարկելի հարցերից է:

Գունանուններն ու գունանվանական կառույցները՝ որպես կոնցեպտի նկարագրման միջոց

Աշխարհի հետ հարաբերվելիս ձևավորվում է մարդու հոգևոր և մտավոր աշխարհը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ նմուշօրինակն իրական աշխարհի՝ արտացոլված լեզվում (և ոչ միայն): Նկատի ունենալով լեզվի կարևորագույն դերակատարությունն այս գործընթացում՝ լեզվափիլիսոփայական գրականության մեջ աշխարհի մտահոգևոր նմուշօրինակն ընդունված է կոչել նաև աշխարհի լեզվական պատկեր, որում, լեզվական միավորների միջոցով, ոչ թե պատճենվում, այլ անվանվում և յուրակերպ մեկնաբանվում է արտալեզվական աշխարհը: Լեզվական պատկերը՝ «...աշխարհի հայելային արտացոլանքը չէ, այլ որոշակի նկարագիրը» (Серебрянников 1983):

Եթե աշխարհի լեզվական պատկերը նկարագիր է և մեկնաբանություն, ապա այն չի կարող միանման լինել տարբեր ժողովուրդների մոտ: Ամեն մի քաղաքակրթություն, ամեն մի լեզվամշակութային հանրույթ ունի իրեն հատուկ աշխարհընկալում և դրան համապատասխան լեզվական պատկեր (Гуревич 1994):

Մի շարք լեզվաբաններ (Брутян, Колшанский, Постовалова, Телия) տարբերակում են աշխարհի լեզվական և կոնցեպտուալ պատկերները, որոնք, նրանց իսկ համոզմամբ, ոչ թե միմյանց հակասում, այլ՝ փոխլրացնում են: Անառարկելի է, որ գույները (գունանունները) ուրույն տեղ են զբաղեցնում աշխարհի լեզվական պատկերում և ակտիվորեն մասնակցում են դրա ձևավորմանը:

Շատ հաճախ կոնցեպտ ա հասկացություն եզրերը գործածվում են որպես հոմանիշներ: Հասկացությունը և նշանակությունը, – գրում է Յու. Ստեպանովը, նույն կարգի երևույթներ են, միայն տարբեր կարգային հարաբերություններով: Նշանակությունը դիտարկվում է լեզվական, իսկ հասկացությունը՝ տրամաբանական ձևերի և հարաբերությունների մակարդակում (Степанов 1997):

Կոնցեպտ եզրույթի գիտական ընկալումը բազմակողմ է և վիճահարույց: Դա բացատրվում է նրանով, որ կոնցեպտը հավասարապես կապված է թե՛ լեզվի, թե՛ մշակույթի և թե՛ տրամաբանության ու լեզվամտածողության հետ:

Գունանունները և գունանվանական կառույցները կարող են ծառայել որպես այս կամ այն կոնցեպտի նկարագրման միջոց՝ տեղեկություններ հաղորդելով լեզվամշակութային և պատմամշակութային արժեքների, ինչպես նաև լեզվամտածողության և աշխարհընկալման առանձնահատկությունների մասին տվյալ հանրույթում:

Կոնցեպտի՝ որպես մշակութային երևույթի, կենտրոնական տարրը, գնահատողականության հատկանիշն է: Այն շրջապատված է հուզական, արտահայտչական, գնահատողականության լուսապսակով: Այն պատկերացումների, հասկացությունների, գիտելիքների, ասոցիացիաների, զգացումների մի փունջ է, որն ուղեկցում է բառին և վերջինիս արտահայտած իմաստին: Կոնցեպտը՝ հույզերի և կարծիքների, համակրանքի և հակակրանքի բխսման հանգուցակետ է (Маслова 2005):

Այս բնորոշումը ամբողջովին համապատասխանում է գույն կոնցեպտին, որի կոնկրետ դրսևորումները (կարմիր, կապույտ, սև, սպիտակ և այլն) իրենց լեզվական կապակցված ձևերում կրում են վերոնշյալ բոլոր հատկանիշները:

Գունանունները, քաղաքակրթության արևածագից սկսած, իրենց փոխաբերական, խորհրդանշանային, գուգորդային իմաստներով թափացնել են մարդկային գործունեության գրեթե բոլոր ոլորտները պարունակող լեզվանյութի մեջ: Դրանք կարևոր նշանակություն են ունեցել առասպելական հերոսների բարոյական, վարքագծային հատկանիշների ներկայացման և նկարագրության համար: Այստեղ առավելապես գործածական են եղել կանաչ, սպիտակ և սև գույները:

Եվրոպական մշակույթի մի շարք առասպելներում կանաչ գույնը խորհրդանշում է բնության զարթոնք, զարուն, բերրիություն: Այս գուգորդումը մարմնավորում է Կանաչ մարդու (L’Homme Vert) կերպարը՝ կանաչ տերևներով եզրագծված դեմքով: Նման տեսքով նա պատկերված է բազում կտավներում, քանդակներում, ճարտարապետական կառույցներում, ինչի մասին են վկայում մի շարք մշակութաբանական ուսումնասիրություններ:

Միջնադարյան ավանդություններում առասպելների կերպարները ներկայացվել են կանաչ և սպիտակ գույներով: Կանաչը (Le Chevalier Vert) զուգորդվել է հրաշքին, գերբնական կարողություններին, իսկ սպիտակը՝ (Le Chevalier Blanc), ի հակադրություն սևի, (Le Chevalier Noir) բարությանը՝ մասնավորապես այրիների և որբերի պաշտպանության համատեքստում: Հետաքրքրական է նշել, որ այսօր Chevalier Blanc գունանվանական կառույցը ձեռք է բերել ինչ-որ բանի պաշտպան լինելու իմաստը (défenseur de qqch.) և գործածվում է ժամանակակից լեզվում:

Շատ հաճախ միևնույն գույնը կարող է հանդես գալ հակադիր իմաստներով: Օրինակ՝ կանաչ գույնը որոշ առասպելներում զուգորդվում է թե՛ չարին (Dame Verte) թե՛ բարուն (Homme Vert): Նույնը կարելի է ասել նաև սպիտակ գույնի մասին (Homme Blanc – Dame Blanche). Հեքիաթներում կարմիր գույնը զուգորդվել է կախարդության, գաղտնի գիտելիքի հետ: Այդ զուգորդությունն առաջ է եկել այն բանից, որ հեքիաթներում թգուկները կրել են կարմիր գույնի սրածայր գլխարկներ: Կարմիր գլխարկ է կրել հայտնի Կարմիր գլխարկը հեքիաթի հերոսուհին (Jarman 2003): Հատկապես ընդգրկում են սև կոնցեպտի դիցաբանական մեկնաբանությունները: Դիցաբանության մեջ այն զուգորդվում է դժոխային ամենատարբեր երևույթներին:

Կրոնական բնույթի տեքստերում իրենց ուրույն տեղն ունեն սպիտակ, սև, կարմիր և կանաչ գույները: Աստվածաբանական գրեթե բոլոր գրություններում սպիտակ գույնը խորհրդանշում է դրախտը, գեղեցիկը, բարությունը, անմեղությունը, երջանկությունը, ուրախությունը: Սպիտակի խորհրդանշանային իմաստների այս առատությունը պայմանավորված է այն իրողությամբ, որ այս երևույթները նախ և առաջ զուգորդվում են Աստծո լույսին, ինչը նախաստեղծողն է վերոնշյալ երևույթների: Ավելացնենք նաև, որ կաթոլիկ եկեղեցու սպասավորները կրում են սպիտակ գույնի հանդերձանք՝ ի նշան վերոնշյալ խորհրդանշական իմաստների: Կրոնական տեքստերում կանաչ գույնը նույնպես զուգորդվում է երջանկության գաղափարին՝ ամենատարբեր իմաստային նրբերանգներով:

Քրիստոնեական որոշ տեքստերում կանաչը զուգորդվում է աստվածային հավիտենական կյանքին, վերագրելով այն Սուրբ Մարիամ Աստվածածնին:

Կանաչը գործածվում է նաև ճիշտ և ճիշտ հակադիր իմաստով՝ սատանային նկարագրելու համար:

Հայտնի է, որ ֆրանսիական միապետության օրոք սպիտակ գույնը գերիշխում էր ամենուր – զինանշան, պալատական հագուստ, որմնանկար, կահույք, իսկ դրոշն ամբողջովին սպիտակ էր: Ամենայն հավանականությամբ Ֆրանսիայի միապետերը փորձում էին իրենց վերագրել սպիտակ գույնի բոլոր դրական զուգորդային իմաստները: Պատմականորեն սպիտակին փոխա-

րինելու եկավ կարմիրը: Այն դարձավ ֆրանսիական թագավորների, զինվորական ղեկավարության նախընտրելի գույնը՝ խորհրդանշելով իշխանություն, արժանապատվություն, ֆրանսիական քաղաքակրթություն:

Տարաժամանակյա դիտարկմամբ կարմիրը համարվում է ամենահակասական հավելիմաստներ ունեցող գույնը: Ահա թե ինչ է գրում այդ մասին ֆրանսիացի բառագետ Դեֆուրը. «Այս գույնի մեջ միաժամանակ արտացոլված են գեղեցիկն ու սարսափելին, գույներից ամենաերկիմաստն է, որ դարեր շարունակ թե՛ գերել, թե՛ ահաբեկել է մարդկանց» (Desfour 2005):

Որոշ հետազոտողներ իմաստային այս երկակիությունը կապում են այն իրողության հետ, որ կարմիրը, նախ և առաջ, ընկալվում է որպես արյան գույն, իսկ արյունն էլ, իր հերթին, զուգորդվում է թե՛ կյանքին, թե՛ դաժանությանը (արյունոտ վերք) (Huyghe 1955):

Չուգորդվելով գեղեցիկին, կարմիրն իր ուրույն տեղն է գտել ամուսնական ծիսակարգերում: Մինչև 19-րդ դարի վերջը կարմիր շրջագգեստը համարվել է ամենագեղեցիկը և աղջիկներն այն կրել են հարսանյաց ծեսերի ժամանակ (Pastoureau 2003): Այսօր այդ դերում կարմիրն փոխարինում է սպիտակը: Կարմրի բացասական զուգորդային հավելիմաստները (ատելություն, գայրույթ, բռնություն, հանցագործություն), ի տարբերություն դրականի, իրենց արտահայտությունն են գտել որոշ լեզվական կառույցներում, ինչպես, օրինակ, *se fâcher tout rouge, voir rouge, manger du pain rouge* և այլն:

Բառարանային տվյալները վկայում են այն մասին, որ վերջին երկու-երեք տասնամյակների ընթացքում կարմիրն ընդլայնել է իր վտանգ, արգելվում է հավելիմաստների գործածության ոլորտը, ինչպես օրինակ՝ *axe rouge - ճանապարհահասնգույց*, որտեղ արգելվում է ավտոմեքենաների կանգառը, *alerte rouge - տազնապ*, արտակարգ իրավիճակի պայմաններում, *plan rouge - գործողությունների ծրագիր*՝ արտակարգ իրավիճակների պայմաններում (Petit Larousse 2012):

Նկատելի է, որ գունանունների հավելիմաստները, ընդհանուր առմամբ, առաջ են գալիս տվյալ գույնի տիպական վերաբերյալին զուգորդվող իմաստներից, ինչպես, ասենք՝ *սպիտակ - լույս, կարմիր - արյուն, սև - մութ, կանաչ - բնություն, կապույտ - երկինք*:

Այստեղ բացառություն է կազմում կանաչը, որն իր որոշ հավելիմաստներ ձեռք է բերել այլ ճանապարհով: Այս կարծիքին են որոշ ֆրանսիացի բառարանագետներ: Այսպես՝ 18-րդ դարում առաջ քաշվեց առաջնային և երկրորդական գույների տեսությունը: Առաջնային համարվեցին այն գույները, որոնք չեն գոյանում այլ գույների միացումներից (դեղին, կապույտ, կարմիր), իսկ երկրորդական՝ այն գույները, որոնք գոյանում են առաջնային գույների խառնուրդներից (կանաչ, նարնջագույն, մանուշակագույն): Այս տեսության շրջա-

նակներում կանաչը մղվեց երկրորդ պլան: Կարմրի արգելվում է հավելիմաստին ավելացավ կանաչի՝ չի արգելվում հավելիմաստը: Եվ ահա այսպես, Պաստուրոյի կարծիքով, առաջ եկավ ճանապարհային երթևեկության միջազգայնորեն ընդունված գունային ազդանշանների այսօրվա համակարգը (Pastoureau 2002):

Կանաչ գույնի գուգորդային իմաստների առաջացման պատճառների մասին հետաքրքիր մեկնաբանություններ է տալիս նաև Դեֆուրը, որի կարծիքով վտանգ, ազարտ, սնահավատություն գուգորդային իմաստների ծագումը կապված է այն հանգամանքի հետ, որ հնում կանաչ գույնը ստացվում էր թունավոր քիմիական մասնիկների միախառնումից (*arsenic, cyanure*): Նա գտնում է նաև, որ այս գույնի քիմիական բաղադրության անկայունությունը և վտանգավորությունը նպաստել է նաև հաջողության/անհաջողության գուգորդային իմաստների ի հայտ գալուն (Desfour 2005): Այդուհանդերձ պետք է փաստել, որ կանաչ գունանվան հիմնական գուգորդային իմաստները հարաբերվում են բնության զարթոնքին, զարնանը, ինչը նույնն է, թե կյանքին ու հույսին:

Գունանվանական կառույցներն ունեն պատմամշակութային արժեք: Այսպես՝ կանաչ գունանվամբ մի շարք հնացած արտահայտություններ վկայում են միջնադարյան որոշ ավանդույթների մասին: Բերենք մի քանի օրինակ. *Laisser sur le vert* նշանակել է լքել, հեռանալ, *prendre quelqu'un sans vert* - հանկարծակիի բերել: Այս արտահայտությունները գործածվել են ավանդական խաղերի ժամանակ: Կանաչ տերևներն այս խաղերի կարևորագույն ատրիբուտներից են եղել. մասնակիցները անպայմանորեն իրենց ծածկել են կանաչ տերևներով, ինչի մասին վկայում է նաև խաղի անվանումը (*jouez, ou je vous prends sans vert*) (Huyghe 1955):

Հետաքրքրականն այն է, որ մեր օրերում ևս կանաչը, փոխանունային մեխանիզմի միջոցով ի հայտ է գալիս խաղերի անվանումներում: *Le dzmon du tapis vert* արտահայտությունը ֆրանսերենի խոսակցականում նշանակում է խաղամուլ. փոխանունության հիմքը խաղասեղանների կանաչ ծածկոցներն են:

Tapis vert – գունանվանական կառույցը այսօր գործածվում է նաև քաղաքական համատեքստում բանակցային սեղան իմաստով:

Որոշ համատեքստերում կանաչը գուգորդվում է երիտասարդ, առույգ, առնական իմաստներին:

Կոնցեպտ եզրույթի գիտական ընկալումը բազմակողմ է և վիճահարույց: Դա բացատրվում է նրանով, որ կոնցեպտը հավասարապես կապված է թե՛ լեզվի, թե՛ մշակույթի և թե՛ տրամաբանության ու լեզվամտածողության հետ:

Գունանունները և գունանվանական կառույցները կարող են ծառայել որպես այս կամ այն կոնցեպտի նկարագրման միջոց՝ տեղեկություններ հաղորդելով լեզվամշակութային և պատմամշակութային արժեքների, ինչպես նաև լեզվամտածողության և աշխարհընկալման առանձնահատկությունների մասին տվյալ հանրությամբ:

Կոնցեպտի՝ որպես մշակութային երևույթի, կենտրոնական տարրը, գնահատողականության հատկանիշն է: Այն շրջապատված է հուզական, արտահայտչական, գնահատողականության լուսապսակով: Այն պատկերացումների, հասկացությունների, գիտելիքների, ասոցիացիաների, զգացմունքների մի փունջ է, որն ուղեկցում է բառին և վերջինիս արտահայտած իմաստին: Կոնցեպտը՝ հույզերի և կարծիքների, համակրանքի և հակակրանքի բախման հանգուցակետ է (MacLova 2005):

Այս բնորոշումը ամբողջովին համապատասխանում է գույն կոնցեպտին, որի կոնկրետ դրսևորումները (կարմիր, կապույտ, սև, սպիտակ և այլն) իրենց լեզվական կապակցված ձևերում կրում են վերոնշյալ բոլոր հատկանիշները:

Գունանունները, քաղաքակրթության արևածագից սկսած, իրենց փոխաբերական, խորհրդանշանային, զուգորդային իմաստներով թափացնել են մարդկային գործունեության գրեթե բոլոր ոլորտները պարունակող լեզվանյութի մեջ: Դրանք կարևոր նշանակություն են ունեցել առասպելական հերոսների բարոյական, վարքագծային հատկանիշների ներկայացման և նկարագրության համար: Այստեղ առավելապես գործածական են եղել կանաչ, սպիտակ և սև գույները:

Եզրակացություն

Ամեն մի բնական լեզու յուրակերպ է ընկալում և արտացոլում արտալեզվական աշխարհը: Լեզվում առկա նշանակությունները կազմում են հայացքների որոշակի համակարգ, կոլեկտիվ փիլիսոփայություն՝ պարտադրված լեզվական հանրույթի բոլոր անդամներին:

Լեզվին ներհատուկ է աշխարհի կոնցեպտուալացումը, ինչը, մասամբ, կրում է համամարդկային, մասամբ էլ՝ նեղ ազգային բնույթ:

Աշխարհի լեզվական ընկալումը (կոնցեպտուալացման ձևը) պարզ է (բայց ոչ՝ պարզունակ) այն չափով, որ չափով որ այն տարբերակվում է աշխարհի գիտական պատկերից:

Ամեն մի հիմնական գունանուն կարող է դիտարկվել որպես կոնցեպտ, կամ էլ դառնալ մեկ այլ կոնցեպտի բաղկացուցիչ մաս: Մեր դեպքում այդ կոնցեպտներն են առասպել, կրոն, պետություն, սովորույթ, կենցաղ: Նշյալ կոնցեպտներում առավել մեծ հաճախականությամբ հանդես են գալիս noir, blanc և rouge գունանունները:

1. Desfour, A.M. (2008) *Les mots de la couleur, des passages entre langues et cultures*. Paris: CNRS Editions, 13 Villetaneuse.
2. Jarman, D. (2003) *Un livre de couleurs*. CHROMA. Paris: Éditions de L'Éclat.
3. (2006) *Larousse – Le Petit Larousse Illustré*. Claude Augé, Paris: Librairie Larousse.
4. Pastoureau, M. (2003) *Les couleurs de notre temps*. Paris: Bonneton.
5. Брутян, Г. (2007) *Логическое в зеркале филологического*. Ереван: Изд-во НАН РА.
6. Гуревич, А.Я. (1994) *Категории средневековой культуры*. М.: Искусство.
7. Колшанский, Г.В. (2005) *Паралингвистика*. М.: УРСС Эдиториал.
8. Маслова, В.А. (2005) *Когнитивная лингвистика*. Минск: Тетрасистемс.
9. Постовалова, В.И. (1988) *Картина мира в жизнедеятельности человека. // Человеческий фактор в языке: Язык и картина мира*. М.: Наука.
10. Серебренников, Б.А. (1983) *Общее языкознание*. М.: Издательство Наука.
11. Степанов, Ю.С., Проскурин, С.Г. (1997) *Константы мировой культуры. Алфавиты и алфавитные тексты в периоды двоеверия*. М.: Наука.
12. Телия, В.Н. (2002) *Объект лингвокультурологии между Сциллой лингвокреативной техники языка и Харибдой культуры (к проблеме частной эпидемиологии лингвокультурологии)*. // С любовью к языку. М.: Воронеж: ИЯ РАН, Воронежский гос. ун-т.

Colors in Conceptual System of World Language Picture

The present article considers the use of terms “concepts” and “notion”. The problem of the ratio of the notions “concept”-“words” has been touched upon in the article. An opinion that the concept is a unit relatively independent from the language, which is a result of one of the specific functions of thought and belongs to the sphere of pure logics, has been advanced in the present article. Colors (color names) occupy a special place in the language picture of the world and take an active part in its formation.

Color names and constructions with color names may serve as means of description of this or that concept, informing about the language-cultural and cultural-historical values, as well as about the peculiarities of the language thought and the world perception of the given community.

Цвета в концептуальной системе языковой картины мира

В настоящей статье рассматривается применение терминов “концепт” и “понятие”. Затрагивается проблема соотношения понятий “концепт” - “слово”. Выдвигается мнение, что концепт – относительно независимая от языка единица, является результатом одной из специфических функций мышления и принадлежит к сфере чистой логики. Цвета (цветоимена) занимают особое место в языковой картине мира и принимают активное участие в ее формировании.

Цветоимена и конструкции с цветоименами могут служить средством описания того или иного концепта, сообщая сведения о языково-культурных и культурно-исторических ценностях, а также об особенностях языкового мышления и мировосприятия данной общности.